

ամենայն սահմանորդան, ընդ սուլտանն եւ տեարս Իկոնիոնի, Կեսարիոյ եւ Ալպստանայ, վասն քինուն Խլիճ-արսլանայ. զորս եւ բազում անգամ նեղէր իսկ մարտիւ եւ հատմամբ վիճակաց նոցին, եւ մերթ ձեռնունայն դառնայր, կամ անդրէն յետս դարձուցանէր զոր կորգեալն էր ՚ի նոցանէ: Ոչ կարէր եւ վասն քինուն Սալահէտտինի՝ բարեկամ լինել սուլտանաց Եգիպտոսի եւ Հալպայ. այլ քանզի ընդ իւրն երկիր՝ անջրպետք կային պետութիւնք եւ գաւառք քրիստոնէից Լատինաց, զոսա շատ համարէր ՚ի նախապարիսպ Սիսուանայ:

#### **Գ. Քաղաքավարութիւն նորա ընդ ազգայինսն եւ ընդ ուխտի եկեղեցոյն**

Բայց քան զօտարս նուաճել ՚ի սէր եւ յանդորրութիւն, թերեւս դժուարագոյն էր Լեւոնի՝ զազգայինսն ՚ի նոյն օրէնս ընտելացուցանել, վասն ինքնահաճ նպերտ բարուց եւ անհլութեանն առ համազգի վեհագոյն, որք դիրքնկալք օտարին ծանր լծոյ գտանին, քան ընտանւոյն թէթեւ հարկի. ՚ի բարձրանալ գլխոյ ուրուք ՚ի միջի իւրեանց, թէպէտ եւ արդեամբք եւ իրաւամբք, գո՛գ օրէնս իմն վարկանին եւ զիւրեանցն ամբառնալ գագաթունս, եւ եղջիւր ածել իրերաց: Այլ աստանօր՝ իրաւունք, խորագիտութիւն եւ պնդասրտութիւն Լեւոնի՝ յաջողեցան յամենայնի. իրաւունք, զի արեան եւ քրտանց իւր եւ հարց իւրոց զին էր մեծ մասն երկրին՝ որում տիրէր, եւ զոր յայլազգեաց կորգեալ էին, յաւէտ ՚ի Յունաց եւ ՚ի Թուրքաց, եւ պարգեւեալ վիճակս վիճակս արժանաւորաց անձանց ըստ աւատական օրինաց. որոց հարկ էր ամենայնի զնոյն օրէնս լճութեան հաւատարմութեամբ պահել առ կալուածատուն, ապա թէ ոչ ապստամբք եւ մեղապարտք համարէին: Ի սոցանէ չկայր մեծ ինչ խէթ Լեւոնի, զի եւ տեսանեմք զպարոնայսն յօժարութեամբ յանձն առեալ զիշխանութիւն նորին, որպէս յառաջագոյն զեղբօր նորա Ռուբինի. եւ ո՞ իսկ իշխէր ՚ի փոքունց անտի եւ նուաստից՝ ընդդէմ այնքանոյ աւագի եւ հզօրի յաւակնել: Բայց էին եւ այլք ոմանք աւագագոյն պարոնայք եւ բերդատեարք, որպէս յայտ առնեն բանք պատմագիտաց մերոց, որք ոչ ՚ի Ռուբինեանց անտի, այլ ՚ի նախնի տեարց երկրին ՚ի կայսերաց Բիւզանդիոնի՝ վիճակեալ էին գաւառաց եւ բերդից, կամ անձանց ջանիւ եւ քաջութեամբ տիրացեալ. զոր օրինակ, ծանօթքն՝ Մալղարիպեանք եւ Հեթմեանք, տեարք Լամբրունի եւ Պապեոնի, Նաթանայէլեանք՝ տեարք Ասկուռասայ, հաւանօրէն եւ այլք. սոքա ոչ համարէին զինքեանս պարտականս պայազատաց Ռուբինի, եւ յանձինս կամ ՚ի կայսր